ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «09» հունվարի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 01-Ա

2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2016թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1256-Ա որոշումով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007թ. հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում գործող գիտության պետական կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1579-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և 2018թ. պետական բյուջեի նախագծերի մշակման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ) հետևյալ կազմով՝

   1) Լ. Մարդոյան՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի ղեկավար, աշխատանքային խմբի ղեկավար,

2) Ա. Սահարյան՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության պետ,

3) Ռ. Ասատրյան՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ,

4) Տ. Գալստյան՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ,

5) Մ. Զաքարյան՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ,

Աշխատանքային խմբին՝

1) ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահին ներկայացնել՝

ա. ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի 2018-2020թթ. ՄԺԾԾ համար ստացված և մշակված հայտերը, ինչպես նաև 2018-2020թթ. ժամանակահատվածի համար ոլորտում իրականացվելիք քաղաքականությունը շարադրող փաստաթուղթը (ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2018-2020թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները)՝ մինչև 2017թ. ապրիլի 21-ը,

բ. ավարտուն տեսքի բերված ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի 2018-2020թթ. ՄԺԾԾ նախագիծը՝ մինչև 2017թ. մայիսի 18-ը,

գ. ՀՀ 2018թ. պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կառավարման ապարատի բյուջեի նախագծերը՝ մինչև 2017թ. հուլիսի 14-ը.

2) ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի 2018-2020թթ. ՄԺԾԾ և 2018թ. պետական բյուջեի նախագծերի կազմման ժամանակ հիմք ընդունել ՀՀ ֆինանսների նախարարության բյուջեների մշակման մեթոդական ցուցումները:

2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության պետ Ա. Սահարյանին՝

1) ապահովել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի 2018-2020թթ. ՄԺԾԾ նախագծի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը,

2) ապահովել ՀՀ կառավարության 2018թ. բյուջետային ուղերձի գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին նախագծի մշակումը:

4. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ Ռ. Ասատրյանին՝

1) ապահովել 2018թ. բյուջեի նախագծի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը,

2) ապահովել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն 2018թ. իրականացվելիք գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի սահմանված կարգով ներկայացումը ՀՀ կառավարություն՝ մինչև սեպտեմբերի 16-ը:

5. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ Տ. Գալստյանին՝

1) ապահովել ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կառավարման ապարատի 2018թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի հիմնավորում-բացատրագրի մշակումը,

2) ապահովել ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կառավարման ապարատի 2018թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի (ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով) կազմումը:

6. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին՝ ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի 2018-2020թթ. ՄԺԾԾ և 2018թ. պետական բյուջեի նախագծերը համաձայնեցնել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Սահակյանի հետ:

7. Սույն հրամանի կատարման ապահովումը հանձնարարել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ